



**«Հետաքննող լրագրողներ»** հասարակական կազմակերպություն  
Երևան, Բուզանյի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(37410) 563363, 580219,  
E-mail: [info@hetq.am](mailto:info@hetq.am), [hetq@hetq.am](mailto:hetq@hetq.am), URL : [www.hetq.am](http://www.hetq.am)

Արմավիրի փոխարգպետ Կարեն Գրիգորյանին

«Հետք» պարբերականի լրագրող Սեդա Ղուկասյանից

055814042, Ghukasyansed@gmail.com

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

«Հետքը» պարբերաբար անդրադառնում է պարտադիր զինվորական ծառայությունից ազատված պաշտոնյաների՝ զինծառայությունից ազատման հիմքերի ուսումնասիրությանը:

Ուստի ՀՀ սահմանադրության 51-րդ և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 9-րդ և 12-րդ հոդվածների համաձայն՝ խնդրում եմ տեղեկություններ տրամադրել:

Ձեր կենսագրականում նշվում է, որ Դուք զինապարտ չեք:

Խնդրում եմ հայտնել, թե ինչ հիմքով եք ազատվել զինծառայությունից:

Եթե առողջական հիմքով եք ազատվել, պատրաստ եք կրկին փորձաքննության ենթարկվել:

Խնդրում եմ կցել նաև զինգրքույկի պատճենի այն հատվածը, որում երևում է, թե որ հոդվածով եք ազատվել զինծառայությունից:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏՈՒԹՅԱՆ  
Մտեց թիվ 11-10954-2019  
26 08 2019

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Կանխավ շնորհակալ եմ՝

Սեդա Ղուկասյան 23.08.2019

